տութեամբ ցոյց տալով համապատասխան աւանդները (գեպոզիտները), իսկ առարկայական վճարները այն անձին, որ լիազօրութիւն կունենայ կառավարելու ընդունած կալուածքը։

10) Ցիշեալ կալուածները Երկրագործութեան և Պետական կալուածների Մինիստրութեան տեսչութեան յանձնելու համար բոլոր ծախքերը կատարվում են այն կրեդիտներից, որոնք նշանակուած են կամանդիրովկաների համար, իսկ յետոյ կատարուած ծախքերը հոգացվում են այն գումարից որ պէտք է վերցնուի 10% քանակութեամբ հայ-Լուսաւորչական եկեղեցու անշարժ կալուածների եկամուտից, իսկ ինչ վերաբերում է դրամագլուխների ուղարկելուն և փոխադրութեանը ներքին Գործերի Մինիստրութեան տեսչութեանը այդ ծախքերը կատարվում են այդ դրամագլուխների հաշուին։

ԲՅՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Ա.

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ կարգումն Տ. Անանիա եպս.-ի Համազասպեան ի թեմական առաջնորդ վիճակին Հայոց Շամախւոյ. թ. 820։

— Յանուն բարեպաշտ ժողովրդեան և ուխտաւորաց մենաստանին Սևանայ, որով յորդոր կարդայ չծանրանալ այլ և այլ պահանջիւք ի վերայ վանուցն և զգուշանալ ի պատճառելոյ վնաս ինչ. թ. 822։

— Յանուն վիճ. Կոնսիստ. Հայոց Աստրախանի, որով վաւերացեալ լինին ծախք և գումար 3060 ր. 87 կ. վասն շինութեան եկեղեցւոյն Հայոց Վլադիկաւկազի. թ. 826։

— Յանուն Հոգ. կառավարութեան Հայոց Տաթևու, որով թոյլատրեցաւ դատապարտեալ Սողոմոն քահ.-ի Տ. Անտոնեան Ձաքնի գեղջ քահանայագործել վերստին. Թ. 828:

— Յանուն երեցփոխանի եկեղեցւոյն Հայոց Փիր գեղջ Պ. Համբարձումայ Սահակ. Աստուածատրեանց, ընդ որում յղեցաւ ժապաւինեալ մատեան վասն գանձանակոյ բաժնոց Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի. Թ. 842:

— Յանուն Տ. Բենիկ վարդ.-ի, որով կարգեցաւ ի փոխանորդ վիճակին Հայոց Գանձակայ. Թ. 884:

— Յանուն Թեմական Առաջնորդի Հայոց Վրաստ. և Իմերէթի, որով յայտնեցաւ կարգումն Տ. Բենիկ վարդ.-ի ի փոխանորդ վիճակին Հայոց Գանձակայ. Թ. 908:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ զայգին Վաղարշապատցի Սահփանեայ Գեղամեան թողուլ ամբողջովին ի տիրապետութիւն նորին. Թ. 894:

— Յանուն փոխ. Թեմականի Հայոց Երևանայ Գեր. Տ. Սուքիաս Արքեպս.-ի, որով արտօնեցաւ թաղել զՅովսէփն Տ. Մելքիսեդեկեան առ շիրմն նախնեաց իւրոց ի շրջապատի եկեղեցւոյ Հայոց Համզաչիման գեղջ. Թ. 913:

— Յանուն վիճ. կոնսիստ. Հայոց Երևանայ, որով պատուիրեցաւ անվաւեր համարել զերկրորդ պսակն գաղթական Մանուկայ Աճէմեան, կատարեալն ի կենդանութեան հարազատ կնոջն նորա, և տալ զնա ի դատ մարմնաւոր իշխանութեան. Թ. ՟14:

— Յանուն վիճ. կոնսիստ. Հայոց Երևանայ, որով պատուիրեցաւ յառաջացուցանել գործն «Մեռելայարոյց» Աւետարանին ի նպաստ շինութեան եկեղեցւոյն Վաղանփար գեղջ. Թ. 917:

— Յանուն Ամեն. Պատրիարքին Հայոց Թուրքիոյ, որով պահանջէ տեղեկութիւն զկրկնամուսնութենէ Վարդանայ Սհոյեան, բնակչի Խասսուր գեղջ Ալաշկերտի, Թ. 945:

— Յանուն Նորին Ամենապատուութեան, որով յայտնեցաւ՝ եթէ չիք պատճառ լուծման պսակի Տիկ. Ագնիւի Գարագաշեան ընդ առն նորա. Թ. 947:

— Յանուն Առաջնորդի Հայոց Ատրպատականի Տ. Եղիշէ Ծ. վարդ.-ի, որով լուծեալ եղև պսակն Մարիամու Մնացականեան ընդ անյայտացեալ առն նորա Գէորգայ Պետրոսեան, տալով կնոջն իրաւունս նոր ամուսնութեան. Թ. 948:

— Յանուն Նորին, որով լուծեալ եղև պսակն Յարութիւնի Մաթէոսեան ընդ անբարոյական կնոջն նորա Մարգարտի, տալով իրաւունս առն մտանել ի նոր ամուսնութիւն. Թ. 949:

— Յանուն Նորին, որով տուան ինչ ինչ հրահանգութիւնք վասն կառավարութեան դպրոցաց վիճակին. Թ. 950:

— Յանուն Փոխանորդի հօտին Սիւնեաց Տ. Ներսէս վարդապետի, որով հրամայեցաւ յաւելուլ զռոճիկ քարտուղարի Հոգ. Կառավարութեան տեղւոյն ի տարին մի հարիւր րուբլի. Թ. 980:

— Ընդհանրական յանուն Հայոց բնակելոց ի Հնդիկս, որով յայտնեցաւ նոցա զայցելութենէ Թեմակալ Առաջնորդի վիճակին Տ. Սահակ արքեպիսկոպոսի. Թ. 986:

— Յանուն ամենապատիւ պատրիարքի Կ. Պոլսոյ, որով տուաւ տեղեկութիւն զկատարմանէ օրհնութեան Ս. Միւռոնի. Թ. 1017:

— Յանուն Հոգ. Կառավարութեան Կարուց, որով լուծեալ համարեցաւ պսակն Բաղիշեցի Խոսրովու Նալչաճեան ընդ կնոջ նորա. տալով իրաւունս առն մտանելոյ ի նոր ամուսնութիւն. Թ. 1026:

— Յանուն վանահօր Ս. Սարգիս ուխտատեղւոյն Տփխեաց, որով հրամայեցաւ տալ յարդեանց վանուց ամսաթոշակ Տ. Թադէոս վարդապետի որքան մնայ նա հիւանդ ի Տփխիս. Թ. 1040:

— Յանուն ամեն. Պատրիարքի Կ. Պոլսոյ, որով լուծեալ համարեցաւ պսակն Ալճաճեցի Նազարայ Մելքոնեան ընդ անառակ կնոջն. տալով առն իրաւունս վերստին ամուսնութեան. Թ. 1045:

— Յանուն փոխանորդի վիճակին Կարուց, որով թոյլատրեցաւ պսակել զՆուշօ Գէորգեան ընդ Պետրոսի Նազարեան, ընդ որում կենակցէր ապօրինաբար. Թ. 1060:

— Յանուն ամեն. պատրիարքի Կ. Պոլսոյ, որով յայտնեցաւ զներումն Տ. Թադէոս քհնյ. Փափազեան որ կարգընկէց լեալ էր Հայրապետական հրամանաւ. թ. 1067։

— Յանուն ամեն. պատրիարքի Կ. Պոլսոյ, որով լուծեալ համարեցաւ պսակն Գրիգորի Սարեան ընդ կնոջ նորա Նունիայ, տալով իրաւունս վերջնոյն վերստին ամուսնութեան. թ. 1069։

— Յանուն Վանական կառավարութեան Մայր Աթոռոյ, որով կարգեցաւ կառավարիչ ագարակի Մայր Աթոռոյ ուրարակիր Մկրտիչ Մելքոնեան. թ. 1088։

— Յանուն Հոգ. կառավարութեան Աղեքսանդրապօլու, որով յայտնեցաւ զկարգումն Արիստակէս վարդապետի ի վանահայր վանուցն Հառիճոյ. թ. 1090։

— Յանուն գեր. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի Սմբատեան, որով հաստատեցաւ ի նախկին պաշտօնն իւրում ի վանահայրութեան Ս. Կարապետ վանուցն Աղբակունեաց. թ. 1094։

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ աւագ քահանայութեան յանուն Տ. Ստեփաննոս քահ. Մոլայեան, աւագ երիցու Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ռոման քաղաքի Ռումանիոյ. թ. 936։

— Լանջախաչի յանուն կոյս Իսկուհւոյ Ինֆիաճեան միաբանի կուսանոցի Անապատին Տփխեաց. թ. 904։

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւն

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Դանիէլ Ժամկոչեան եւ Զարեհայ Ի. Սարաճեան, յաղագս նուի-

բաբերութեան նորա մի պատուական գորգի ի պէտս վեհարանի Մայր Աթոռոյ. թ. 954։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն բարեպաշտուհի այրի տիկին Թամարեայ Կաճկաճեան վասն նուիրաբերելոյ նորա զգրատարան հանդուցեալ առն իւրոյ Աստուածատրոյ Կաճկաճեան մատենատարանի Մայր Աթոռոյ. թ. 1013։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄԵՂԱՒՈՐՆԵՐԸ

(Թարգմանութիւն).

Յովհաննէս Մկրտիչը մարդկանց հրաւիրում էր ապաշխարելու։ Նոյն հրաւէրով է սկսում և Յիսուս Քրիստոս իւր քարոզութիւնը։ Մատթէոս աւետարանիչը այսպէս է նկարագրում Յիսուսի քարոզութեան սկիզբը. «Այնուհետև Յիսուս սկսաւ քարոզել և ասել. Ապաշխարեցէք, որովհետև մօտեցել է երկնքի արքայութիւնը» (Մատթ. Դ, 17)։ «Եթէ չապաշխարէք, ասուած է Յովհաննու աւետարանի մէջ, չէք կարող մտնել Աստուծոյ արքայութիւնը»։ Ապաշխարութիւնը առաջին պայմանն է, որով պէտք է սկսուի մարդու բարեփոխութիւնը. առանց ապաշխարութեան հնարաւոր չէ մեր կեանքի մէջ որևէ հոգևոր բարւոքումն։

«Մ՚ով անարդարութեան և անիրաւութեան լծի տակ հեծող մարդիկ, դիմում է Քրիստոս աշխարհին, այն կեանքը, որ ստեղծել էք ձեզ համար, չի կարող տալ ձեր որոնած հոգեկան խաղաղութիւնը։ Ձեր մարդարէներն են. խորամանկութիւն, բռնութիւն, անառակութիւն, նախանձ և